ՀՈՒՄԱՆԻՏԱՐ ԵՎ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ՍՈՑԻԱԼ-ՔԱՂԱՔԱԿԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ՀՏԴ 32

Ն.Ք. ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ

ՔԱՂԱՔԱԿԱՆ ՄՇԱԿՈՒՅԹԻ ԷՈՒԹՅՈՒՆՆ ՈՒ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Արդի քաղաքական կյանքում հատկապես կարևորվում է քաղաքական մշակույթի դերն ու նշանակությունը, քանզի դա մարդկության կողմից ստեղծված այն իրողությունն է, որն անմիջականորեն առնչվում է հասարակության կյանքի կազմակերպմանը, կառավարմանը, պետության ու նրա կառույցների ձևավորմանն ու կայացմանը:

Առանցքային բառեր. քաղաքական մշակույթ, քաղաքական համակարգ, կառուցվածքային տարրեր, քաղաքական գործընթացներ, քաղաքական խոսույթ, քաղաքական գործունեություն, քաղաքական մտածողություն:

Աշխատանքի նպատակն է հնարավորինս բացահայտել քաղաքական մշակույթի էությունը, ձևավորման ընթացքը, նշանակությունը, քաղաքական կյանքում նրա դերակատարությունը, ինչպես նաև ցույց տալ քաղաքական խոսույթի ազդեցությունը քաղաքական մշակույթի զարգացման վրա:

Հայտնի է, որ մշակույթը այն բոլոր արժեքների հանրագումարն է, որոնք մարդկությունը ստեղծել է իր գոյության ընթացքում, ժառանգել սերունդներին նյութական ու հոգևոր արժեքների, իրավական ու բարոյական նորմերի, ավանդույթների ու սովորույթների տեսքով:

Այն ամենը, ինչ վերաբերում է քաղաքական մշակույթին, մարդկությանը հայտնի է վաղուց, նրան անդրադարձ են կատարել Կոնֆուցիոսը, Պլատոնը, Արիստոտելը, սակայն տերմինն առաջին անգամ գործածվել է 18-րդ դարում գերմանացի փիլիսոփա Հերդերի աշխատություններում: Որպես ամբողջական տեսություն այն ձևավորվել է 20-րդ դարի 50-60-ական թվականներին, իսկ նրա մուտքը քաղաքական գիտություն ապահովեց ամերիկացի քաղաքագետ Գ. Ալմոնդը: Քաղաքական մշակույթը մարդկության կողմից ստեղծված արժեքների այն մասն է, որն առնչվում է հասարակության կյանքի կազմակերպմանն ու կառավարմանը, պետության և նրա կառույցների ձևավորմանն ու կայացմանը, իշխանության ձևավորման ու իրականացման մեթոդներին, քաղաքական համակարգերի բնույթին ու գործառույթներին, քաղաքական կազմակերպությունների, իշխանության ու պետության փոխհարաբերություններին, քաղաքական գործըն-

թացներին և նրա մասնակիցներին, քաղաքական սուբյեկտների փոխհարաբերություններին, գործունեության սկզբունքներին և այլն:

Քաղաքական մշակույթ հասկացությունը, ինչպես նաև մշակույթն ընդհանրապես ներառում է այն ամբողջ արժեքավորը, ինչն ակտիվորեն ներազդում է մարդկանց վրա: Ըստ Ալմոնդի՝ «քաղաքական մշակույթը քաղաքական գործունեության մեջ կողմնորոշման հատուկ տարատեսակ է, որն արտացոլում է յուրաքանչյուր քաղաքական համակարգի առանձնահատկությունը» [1]: Մի կողմից՝ քաղաքական մշակույթը հանդես է գալիս որպես տվյալ հասարակության ընդհանուր մշակույթի հատուկ մաս, պահպանելով որոշակի ինքնուրույնություն, մյուս կողմից ՝այն սերտորեն կապված է որոշակի քաղաքական համակարգի հետ՝ չձուլվելով նրան:

Ռուս քաղաքագետ Ա.Ս. Պանարինը, սահմանելով քաղաքական մշակույթը, գրում է. «Քաղաքական մշակույթը կարելի է սահմանել որպես սիմվոլիկ համակարգ, որն ընդգրկում է քաղաքական ավանդույթներ, քաղաքական նորմեր և արժեքներ, քաղաքական գաղափարներ և ապագայի ծրագրեր» [2]:

Հարկ է նշել, որ քաղաքական մշակույթի տարրեր առկա են հասարակական կյանքի բոլոր ոլորտներում ընթացող քաղաքական գործընթացներում և տարալուծված են քաղաքական մասնակիցների փոխհարաբերությունների ողջ համակարգի մեջ:

Կարելի է առանձնացնել քաղաքական մշակույթի երկու բնութագրիչ առանձնահատկություն. ա/ քաղաքական մշակույթը՝ որպես քաղաքական դիրքորոշման ամբողջություն, բ/ քաղաքական մշակույթը՝ որպես կողմնորոշման կառուցվածք, որում ներառված են գիտելիքներ քաղաքական համակարգի, նրա դերի, գործառույթների, որոշումների, հնարավորությունների, ազդեցությունների մասին:

Քաղաքական մշակույթը ցույց է տալիս մարդու և հասարակության կողմից քաղաքական գաղափարների, հայացքների, հիմնադրույթների և ծրագրերի յուրացման աստիճանը, հնարավորություն է տալիս ճիշտ գնահատել տեղի ունեցող քաղաքական զարգացումների բնույթը, օգնում մարդուն, քաղաքական կազմակերպություններին և հասարակությանը՝ ճիշտ կողմնորոշվելու քաղաքական համակարգի նկատմամբ: Այսպիսով, քաղաքական մշակույթը դիրքորոշումների, արժեքների, վարքի կանոնների ամբողջություն է, որը վերաբերում է իշխանությունների և քաղաքացիների փոխադարձ հարաբերություններին:

Քաղաքական մշակույթի ձևավորման կարևորագույն ուղղություններից են պետության, քաղաքական կուսակցությունների, եկեղեցու, ՀԼՄ-ների, հասարակական-քաղաքական կազմակերպությունների, շարժումների նպատակային, հոգևոր, գաղափարական, քաղաքական-լուսավորչական գործունեությունը: Հարկ է նշել,

որ կարևոր դերակատարություն ունեն նաև դպրոցը, ընտանիքը, շրջապատը, աշխատանքային կոլեկտիվը, որոնք հանդիսանում են քաղաքական գիտակցության կենցաղային մակարդակի հիմքը:

Հասարակության մեջ քաղաքական մշակույթը իրականացնում է որոշ գործառույթներ, որոնք մեծապես նպաստում են հասարակության կայուն զարգացմանը: Դրանք են.

1. Կարգավորող գործառույթ – քաղաքական մշակույթը, հենվելով սահմանադրության ու օրենսդրության մեջ ամրագրված նորմերի, արժեքների վրա, կանոնակարգում է քաղաքական վարքագիծը:

2. Հաղորդակցման գործառույթ – իրականացնում է սերունդների փորձի փոխանցում գալիք սերունդներին:

3. Ճանաչողական, կողմնորոշիչ գործառույթ – նպաստում է ճիշտ հասկանալու քաղաքական երևույթների իմաստը, գիտակցելու քաղաքական գործողությունների իրականացման հնարավորություններն ու սահմանները, իրավունքների և ազատությունների իրականացման աստիճանը, հասարակության կյանքում քաղաքականության դերակատարությունը և այլն:

4. Նույնականացման գործառույթ – մարդուն թույլ է տալիս՝ զգալու այս կամ այն սոցիալական խմբին իր պատկանելությունը, հասկանալու իր դերը հասարակության քաղաքական կյանքում, ճշտելու քաղաքական կյանքին իր մասնակցության ձևերն ու միջոցները:

5. Միավորող գործառույթ – քաղաքական մշակույթը հնարավորություն է ընձեռում տարբեր խմբերին հասնելու համաձայնության՝ քաղաքական համակարգի կայունությունն ապահովելու նպատակով:

Հարկ է նշել, որ հատկապես միավորող գործառույթը մեզանում անհրաժեշտ է, քանզի այսօր ավելի քան երբևէ Հայաստանի Հանրապետությունը կարիք ունի քաղաքական համակարգի կայունության:

Քաղաքական մշակույթը ամբողջապես մարմնավորված, նյութականացված է հասարակական-քաղաքական հարաբերություններում և հասարակական-քաղաքական գործունեության համակարգում: Քաղաքական մշակույթի հիմնական ցուցանիշը քաղաքական ինստիտուտներում մարդկության պատմական զարգացման ընթացքում ստեղծված քաղաքական արժեքների և մշակված գործունեության արդյունավետ սկզբունքների նյութականացումն է: Քաղաքական հարաբերությունների ոլորտում մարդու գործունեությունը ստեղծագործական բնույթ ունի ինչպես անցյալի արժեքների օգտագործման, այնպես էլ նոր քաղաքական արժեքների ներդրման առումով: Քաղաքական մշակույթի հիմնական ու ընդհանուր տարրերից են ազգային ժառանգությունը, ավանդույթները, կարծրատի-

պերը, միֆերը, աշխարհաքաղաքական գործոնները, խորհրդանիշերը, պատմականորեն ձևավորված հասարակական, էթնիկական կառուցվածքները և այլն: Որպես քաղաքական մշակույթի կարևորագույն կառուցվածքային տարր կարելի է ընդունել նաև ճանաչողական, բարոյա-արժևորման և վարքագծային տարրերը: Ճանաչողական տարրերը ներառում են քաղաքական գիտելիքները, քաղաքական կրթվածությունը, քաղաքական մտածողության ունակությունը, քաղաքական շահերի գիտակցումը, որը կարող է դրսևորվել անհատական, սոցիալական խմբի, պետական, հասարակական, տեղային և գլոբալ մակարդակներով: Այս տեսանկյունից կարևոր է այն հանգամանքի ընդգծումը, որ Հայաստանի Հանրապետության քաղաքական մշակույթի համապատասխան տարրերն ուսումնասիրելիս հանգում ենք այն եզրահակացության, որ մեր հասարակության մեջ դեռևս ամբողջական չեն քաղաքական գիտելիքները, քաղաքական կրթվածությունը, քաղաքական մտածողությունը և այլն:

Քաղաքական խնդիրների գիտակցումը, քաղաքական կյանքի մասին մարդկանց պատկերացումները սերտորեն կապված են նրանց քաղաքական շահերի և նախասիրությունների հետ: Այդ է պատճառը, որ իրականությունը մարդկանց կողմից գնահատվում է քաղաքական գիտակցության միջոցով, ինչը կարող է իրականության հետ աղերս չունենալ. օրինակ՝ ՀՀ տնտեսական զարգացման տարբեր մոդելները, արտաքին քաղաքական վեկտորները, արցախյան 3-րդ պատերազմի պարտության և դրան հաջորդող մոտեցումները առանձին քաղաքական ուժերի կողմից և այլն: Քաղաքական գիտակցության արդյունք հանդիսացող շատ քաղաքական ուսմունքներ և արժեքներ մեր ժամանակներում ունեն աշխարհայացքային նշանակություն: Հարկ է նշել, որ դրանք կարևոր են ոչ միայն մարդկանց արդի քաղաքական մշակույթի, այլև ամբողջ մարդկության հոգևոր քաղաքակրթության զարգացման տեսանկյունից:

Վերջին շրջանում համաշխարհային արենայում տեղի են ունենում լուրջ ու արագ փոփոխություններ՝ համաշխարհային համակարգի համատարած վերակառուցում, գաղափարական ծածկույթի դեննետում, ռազմավարական հավասարակշռության դեպի նոր կետը արագացված շարժում: Հանգուցային են դառնում համաշխարհային զարգացման կենտրոնական վեկտորի գիտակցման խնդիրը և ըստ դրա երկրների արտաքին քաղաքականության կառուցումը: Համաշխարհային արենայում տեղի են ունենում որակական փոփոխություններ: Խորապես փոփոխության են ենթարկվում աշխարհաքաղաքական մոտեցումները: Աշխարհաքաղաքականությունը ստանում է այլ գունավորում: Ձևավորվում է համաշխարհային համակարգի նոր հիմնակմախք: Բնական է, որ այս ամենը պահանջում է քաղաքական մշակույթի նոր դրսևորում:

Հարկ է նշել, որ հայ ժողովուրդը իր պատմական զարգացման ընթացքում ձևավորել է ուրույն քաղաքական մշակույթ, որն իր առանձնահատկություններով հանդերձ՝ դարձել է տվյալ ժամանակաշրջանի քաղաքական մշակույթի մի մասնիկը:

Քաղաքական մշակույթի ձևավորումը յուրաքանչյուր ազգի մեջ կարող է առանձնահատուկ լինել՝ պայմանավորված կենսակերպով, արտաքին գործոններով, աշխարհաքաղաքական վիճակով, կենցաղով և այլն: Հստակ կարող ենք փաստել, որ քաղաքական մշակույթի հետ սերտ կապակցված են ազգային բնավորությունը, հոգեկերտվածքը, որոնք, բնականաբար, ազդեցություն են գործում ազգի, հասարակության քաղաքական վարքագծի վրա: Այդ տեսանկյունից բնական է, որ մեզանում քաղաքական մշակույթն ունի իր առանձնահատ-կությունները, քանզի մեր պատմության ընթացքում տեսել ենք բազում արհավիրքներ /պատերազմներ օտար նվաճողների դեմ, պետականության կորուստ, ցեղասպանություն, ազգային ազատագրական շարժումներ, փառահեղ հաղթանակներ, պարտություններ/, որոնք, բնականաբար, մեծ ազդեցություն են թողել քաղաքական մշակույթի ձևավորման վրա:

Հասկանալի է, որ քաղաքական մշակույթը՝ որպես մշակույթի բաղադրիչ, ձևավորվում ու զարգանում է քաղաքական հաղորդակցության, փոխկապակցության հետևանքով, որի գործողության արդյունքը քաղաքական խոսույթն է: Խոսույթը, ըստ Վան Դեյքի, ոչ միայն կապակցված տեքստ է, այլ նաև «բարդ հաղորդակցական երևույթ, որը ներառում է նաև սոցիալական համատեքստ, ինչը պատկերացում է ձևավորում ինչպես հաղորդակցության մասնակիցների, այնպես էլ ընկալման և արտաբերման գործընթացների մասին» [3]:

Հարկ է նշել, որ քաղաքական խոսույթի դերը անգնահատելի է մասնավորապես քաղաքական մշակույթի ընկալման, դրսևորման մեջ: Խոսույթը մեծ դերակատարություն ունի ոչ միայն ժողովրդավարության զարգացման, այլև անվտանգության պահպանման, երկրի կայունության, դիվանագիտական գործառույթների, քաղաքական պոլեմիկաների ժամանակ: Անդրադարձ կատարելով հայկական քաղաքական իրականությանը՝ հարկ է նշել, որ այսօր այն, մեղմ ասած, բարվոք վիչակում չէ, ինչով էլ պայմանավորված է մեր քաղաքական դաշտի անկայուն վիճակը, քաղաքական մշակույթի ցածր մակարդակը: Նման երևույթները մեծ վտանգ են պարունակում, քանզի Հայաստանի Հանրապետության շուրջ կատարվող աշխարհաքաղաքական գործընթացները, հարևանությամբ գտնվող թշնամական երկրներից սպասվող վտանգը մեզ նոր մարտահրավերների առաջ է կանգնեցնում և դրանով պայմանավորված՝ քաղաքական խոսույթի վերափոխման պահանջ առաջացնում:

Վերոնշյալից ելնելով՝ կարող ենք եզրակացնել, որ ՀՀ քաղաքական մշակույթի, քաղաքական խոսույթի ձևավորման վրա մեծ ազդեցություն են թողել հետևյալ գործոնները.

1. հայ ժողովրդի գտնվելը տարբեր տիրապետությունների տակ,
2. արցախյան առաջին ազատամարտը, ազդեցությունը հայ ժողովրդի հոգեկերտվածքի, լեզվամշակույթի վրա,
3. աղետի գոտին, նրա հետևանքները, ազդեցությունը քաղաքական խոսույթի վրա,
4. 44-օրյա պատերազմը, անսպասելի հիասթափեցնող արդյունքները և այդ ամենով պայմանավորված՝ հուսալքությունը:

Քաղաքական խոսույթը դարձել է ավելի կոշտ ու անհանդուրժող, ինչը մեծ վնաս կարող է հասցնել ՀՀ-ի անվտանգությանն ու ինքնիշխանությանը:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. **Almond G., Verba S.** The Civil Culture: Politikal Attitudes and Demokracy in Five Nations. - Princeton Univ, Press, 1963.- 13 p.
2. **Панарин А.С.** Политология.- М.,1999.- 327 с.
3. **Ван Дейк.** Язык. Познание: Коммуникация.- М., 1989.- 13 с.

Н.К. БАГДАСАРЯН

СУТЬ И ОСОБЕННОСТИ ПОЛИТИЧЕСКОЙ КУЛЬТУРЫ

Роль и значение политической культуры особенно подчеркиваются в современной политической жизни, поскольку это часть, созданная человечеством, которая напрямую связана с организацией, управлением обществом, формированием и становлением государства и его структур.

Ключевые слова: политическая культура, политическая система, структурные элементы, политические процессы, политический дискурс, политическая деятельность, политическое мышление.

N.K. BAGHDASARYAN

THE ESSENCE AND PECULIARITIES OF POLITICAL CULTURE

The role and significance of political culture are especially emphasized in modern political life, for it is the segment created by mankind that directly deals with the organization, management of public life, the formation and establishment of the state and its structures.

Keywords: political culture, political system, structural elements, political processes, political discourse, political activity, political thinking.